

336

ju-11

11.09.2013

26.7.79

05 JAN 2010

Հ Ր Ա Մ Ա Ն

Խ.Ս.Հ.Մ. ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ

«2» տարիի 1937 թ.

№ 97

Փաստաթղթային ստուգումների կազմակերպման և բյուջե-տային տեսուչների աշխատանքների բարելավման մասին:

(Քննության և առնված Խ.Ս.Հ.Մ. ֆինանսների ժողկոմին կից Խորհրդի կողմից 1937 թ. մարտի 26-ին).

Բյուջեների կատարման ֆինանսական պլանների և հիմնարկների նախահաշիվների կատարման ռեզիզիտի ըստ փաստաթղթերի հանդիսանում և պետական ու տեղական բյուջեների կատարման ստուգման վճռական մեթոդներից մեկը, առանց վորի հնարավոր չէ ապահովել ֆինանսական և մասնավորապես բյուջե-տային կարգապահությունը, վորի նշանակությունը բազմիցս անգամ ընդգծել և իր վորոշումների մեջ կուսակցությունն ու կառավարությունը:

Միութենական ֆինժողկոմատի և ամբողջ ֆինանսական սխտեմայի աշխատանքի հիմնական բացերից մեկը հանդիսանում և պետական և տեղական բյուջեների և սրանց հետ կապված հիմնարկների, անումարմինների ու ձեռնարկությունների ստուգման աշխատանքների վոչ բավարար կազմակերպումը:

Ռեվիզիոն աշխատանքների վոչ բավարար կազմակերպման հետևանքների մասին վկայում են բյուջետային կարգապահու-թյան կոպիտ խախտումների բազմիցս փաստերն, արտապլանա-յին ծախսերի կատարումը, պետական միջոցների հափշտակու-մները և պետական գանձարկղի ուղղակի կողոպտումները, վորոն-

ցով մի շարք դեպքերում ոգտվել են հակահեղափոխական նպատակներով տրոցկիստները և ժողովրդի այլ թշնամիները:

Ռեվիզիոն աշխատանքների նման դրուժյունը հետևանք է նրան, վոր այս դործը թերադնահատվում է Միութենական ֆինտոդկոմատի, առանձին դաշնակից հանրապետությունների ֆինտոդկոմատների և տեղական ֆինանսական մարմինների դեկլարաների կողմից, վորոնք կազմակերպչորեն չեն ապահովել ռեվիզիոն աշխատանքը, այդպիսին անհրաժեշտ քաղաքական բարձրության վրա դնելու համար:

Ռեվիզիոն աշխատանքների կազմակերպման հիմնական բացերը, պետական և տեղական բյուջեներով, հանդիսանում են՝

ա) բյուջետային կարգապահության խախտումների դեպի այսպես կոչված «չնչին» փաստերին գոյություն ունեցող անտարբեր վերաբերմունքը և սովորությունը, ֆին. բյուջետային կարգապահությունը խախտողների հանդեպ, գոյություն ունեցող լիբերալ վերաբերմունքը, քաղաքական մոտեցման բացակայությունը դեպի ռեվիզիոն նյութերը և անկարողությունը հայտնաբերելու բյուջետային կարգապահությունը խախտող մեղավոր բոլոր անձանց, անկախ (նրանց դեմքերի) անձնավորությունների ու կանչել նրանց պատասխանատվության:

բ) Յուրաքանչյուր բյուջեն և բյուջետային հիմնարկը տարեկան մեկ անգամ ստուգման յենթարկելու վերաբերյալ գոյություն ունեցող որենքը չի կատարվում, անփույթ վերաբերմունքը դեպի ստուգումները, վորոնք հաճախ կատարվում են մակերեսորեն, փոխանակ փաստաթղթերի հիման վրա խորը կերպով հայտնաբերելու բոլոր տեսակի գոյություն ունեցող խախտումները և չարաշահությունները, լրիվ կերպով անել անհրաժեշտ քաղաքական հետևություններ, հայտնաբերելու բոլոր բյուրոկրատներին, զեղծարարներին և պետական սեփականությունը հափշտակողներին ու պետական գանձարկղի հաշվին բոլոր տեսակի «բարեգործներին»։ վորոնք թույլ են տալիս իրենց ձեռք ներս մտցնել պետական գրպանը:

գ) Շատ դեպքերում փաստացի ստուգումներն ըստ սկզբնական փաստաթղթերի փոխարինվում են թեթև հետազոտում-

ներով, կամ թե կատարվում է «փաստացի» ստուգում ըստ հաշվետվությունների, չստուգելով սկզբնական փաստաթղթերը:

դ). Ֆինանսական ժողովումների և ֆինբաժինների վարիչները կողմից ռեվիզիոն աշխատանքների վոչ բավարար դեկլարությունը, նրանց հոգատար վերաբերմունքի բացակայությունը վերստուգիչներին քաղաքականապես դաստիարակելու համար նրանց ստուգումների կոնկրետ որինակները վրա, ֆինանսական մարմինների դեկլարաների միանգամայն անթուլատրելի վերաբերմունքը դեպի ռեվիզիոն աշխատանքը, վորոնք նայում են այդ աշխատանքի վրա վոչ թե վորպես դեկլարման սուր դեմքի, այլ վորպես անխուսափելի և միևնույն ժամանակ անախորժ և ձանձրացնող գործի վրա, վորը նույնիսկ կարող է խուժության պատճառ դառնալ հիմնարկությունների և կազմակերպությունների դեկլարաների միջև:

յ) Բյուրոկրատիզմ և քաշքուշ, վորը ցուցաբերվում է ֆին. մարմինների դեկլարաների կողմից առանձին ստուգումների արդյունքներն ամփոփելու ընթացքում, ձգձգումներ վորոշումները կայացնելու ընթացքում, մինչև վոր կատարված ստուգումը հնացած լինելու պատճառով կորցնում է իր սրությունը, իսկ հետևությունները իրենց նշանակությունը, վորպիսի հանգամանքը թուլացնում է ռեվիզիոն աշխատանքը և կանգնեցնում է քայքայման առաջ:

զ) Ստուգումների կապակցությամբ ընդունված բոլոր վորոշումների սխտեմատիկ կատարման ստուգման նաև հայտնաբերված խախտումները փաստորեն վերացնելու համար, հսկողության բացակայությունը:

թ) Վերստուգիչների վրա միանգամայն բացակայում է հսկողության կազմակերպումը, նաև վորքան բարեխղճորեն, ճշտությամբ ու վորակով նրանք կատարում են ստուգման աշխատանքները:

ի) Վերստուգիչների կադրերի քաղաքական և սոցիալական կրթության չափազանց ցածր մակարդակը, նրանց անհանդուրժելի հոսունությունը և պակասությունը:

լ) Խ.Ս.Հ.Մ. ՖԺԿ. կողմից ցուցմունքների բացակայությունը ճիշտ կերպով վերստուգման աշխատանքները կարգավորման

յինթարեկելու համար, վերստուգման աշխատանքների վերաբերյալ հրահանգների ու ծրագրերի նաև անհրաժեշտ տեղեկանքների, բացակայությունը:

Ճ) Տեղական ֆինմարմինների մի քանի ղեկավարներին հաշտվողական վերաբերմունքը դեպի գործկոմների ու խորհուրդների սխալ վորոշումները, վորոնք պատճառ են հանդիսանում ֆին. բյուջետային կարգապահություն խախտումների և ֆինմարմինների կողմից միջոցներ ձեռք չեն առնվում այդ վորոշումները բեկանելու բարձրագույն մարմիններում:

Կ) Ներք գերատեսչական ֆին. կոնտրոլի վոչ բավարար կազմակերպումը և ֆին. մարմինների կողմից այդ կոնտրոլը ուժեղացնելու համար համապատասխան միջոցներ չեն ձեռնարկվում:

Ֆին. բյուջետային կարգապահություն և վերահսկողություն գործի զբաղմունքի անբարեհաջող գրությունը նկատվում և կուրսային մարզում (Մարզֆինբաժնի վարիչ ընկ. Պանտյուշկին), Ազոլո-Չերնոմորյան մարզում (ընկ. Գալլիտ), Սարկովի մարզում, Ուզբեկստանի ԽՍՀ-ում (ժողկոմ ընկ. Իսլամով), Տաճիկստանի ԽՍՀ-ում (ժողկոմ ընկ. Շալիմով), վորի համար պատասխանատու չեն այդ ֆինմարմինների ղեկավարները:

Տեղական և պետական բյուջեների և սրանց հետ կապված հիմնարկների, տնտեսական մարմինների ու ձեռնարկությունների վերստուգման աշխատանքների քաղաքական և կազմակերպչական կողմի ու անհանդուրժելի բացերը շուտափույթ վերացնելու համար,

Հրամայում եմ՝

Ա. ՎԵՐՍՏՈՒԳԻՉՆԵՐԻ ԿԱԴՐԵՐԸ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

Ի նկատի ունենալով, վոր բյուջետային վերստուգիչների և շրջանային վերստուգիչների (հատուկ-հրահանգիչների) ընդհանուր և մասնագիտացիոն պատրաստականությունը չափազանց ցածր է, անթույլատրելի հոսունություն և տիրում նրանց մեջ, առաջարկել դաշնակից հանրապետությունների ֆինանսների ժողկոմներին, ինքնավար հանրապետությունների ֆինանսների

ժողկոմներին, մարզային ու յերկրային ֆինանսական լաժիններին վարիչներին մինչ 1938 թ. հունվարի 1-ը ատեստացիոն ատուկարգով, անձամբ ստուգել բոլոր վերստուգիչներին, նրանց քաղաքական պատրաստականությունը և գործնական կվալիֆիկացիան, ամրացնել նրանց կազմը վորակյալ ստուգված մարզկանցով, վորոնք նվիրված են խորհրդային իշխանությունը, առաջ քաշելով այդ աշխատանքների համար ֆինանսական մարմինների լավագույն աշխատակիցներին, ի նկատի ունենալով այն կարևոր հանգամանքը, վոր առանց այս լինողի լուծման չի կարող լինել վոչ մի խոսք, վերստուգման աշխատանքների բարելավման մասին:

Առաջարկել դաշնակից հանրապետություններին ՖժԿ սահմանել սխտեկատիկ հսկողություն իրենց յինթակա ֆինանսական մարմինների վրա, այս հրամանը կատարելու համար և առ 1-ն փետրվարի 1938 թ. դեկտեմբեր ԽՍՀՄ ՖժԿ կատարված աշխատանքների արդյունքների մասին:

Առաջարկել ԽՍՀՄ. ՖժԿ. բյուջետային տեսչության պետին և ղեկավար ֆինանսական կազմերի հաշվառման սեկտորի վարիչին 1937 թ. ապրիլի 20-ից վոչ ուշ ներկայացնել ինձ ի հաստատություն ֆինմարմիններին արվելիք ցուցմունքների նախագիծը, վերստուգիչներին ստուգման յինթարեկելու կարգի մասին և միասին սահմանել սույն հրամանի այս կետի ստուգումը:

2. Ի նկատի ունենալով այն հանգամանքը վոր ավելի պահանջկոտ և հաստատամիտ վերստուգիչներին դանազան պատրվակների տակ հեռացնում են վերստուգման աշխատանքից, առաջարկել դաշնակից հանրապետությունների ֆինանսների ժողկոմներին խիստ կերպով հետևել նրան, վորպեսզի առանց իրենց անձնական թույլտվության վոչ մի մարդային և յերկրային ֆինմարմինների վերստուգիչին չհանեն աշխատանքից, կամ այլ պաշտոններ փոխադրեն:

Պարտավորեցնել դաշնակից հանրապետություններին ՖժԿ ձեռնարկել այնպիսի միջոցներ, վորպեսզի ինքնավար հանրապետությունների ՖժԿ. մարդային ու յերկրային ֆինմարմինների պետությունների ՖժԿ. մարդային ու յերկրային հսկողություն վարիչները սահմանեն նույնպիսի խստագույն հսկողություն շրջանային և քաղաքային վերստուգիչների նկատմամբ:

Պարտավորեցնել ԽՍՀՄ ՖժԿ բյուջետային տեսչության պետին բյուջետային վերստուգիչներին աշխատանքից հանելու,

կամ այլ աշխատանքի նշանակելու հայտնաբերված յուրաքանչյուր դեպքի մասին, յերբ խախտվում է սույն հրամանով սահմանված կարգը, կատարել հետաքննություն և ղեկավարել ինձ:

3. Առաջարկել դաշնակից հանրապետությունների ՖԺԿ առ 1-ն ողոստոսի 1937 թ. ներկայացնել ինձ ի հաստատություն դաշնակից հանրապետությունների ՖԺԿ. բյուջետային տեսչությունների բոլոր վերստուգիչներին նրանց քաղաքական և գործնական մանրամասն բնութագրերով:

Առաջարկել Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. Ուկրաինական Ս.Ս.Հ., Վրացական Ս.Ս.Հ., Ուզբեկական Ս.Ս.Հ., Ադրբեջանական Ս.Ս.Հ., Ղազախական Ս.Ս.Հ. ՖԺԿ-ին սահմանել նույնպիսի կարգ ինքնավար հանրապետությունների ՖԺԿ-ի և յերկրային ու մարդային ֆինանսական բաժինների բյուջետային տեսչությունների վերստուգիչներին նկատմամբ:

4. Առաջարկել դաշնակից հանրապետությունների ՖԺԿ կադրերի պատրաստման համար իրենց հատկացված միջոցներէց ապահովել 1937 թ. շրջանային վերստուգիչների վերապատրաստումը 2 ամսյա դասընթացներում վոչ պակաս՝

Ռ.Ս.Ֆ.Ս.Հ.-ում	730	անձ.
Ուկրաինական Ս.Ս.Հ.-ում	150	»
Բելոռուսական Ս.Ս.Հ.-ում	30	»
Վրացական Ս.Ս.Հ.-ում	30	»
Ադրբեջանական Ս.Ս.Հ.-ում	30	»
Ուզբեկական Ս.Ս.Հ.-ում	60	»
Տաճիկական Ս.Ս.Հ.-ում	20	»
Տուրքմենական Ս.Ս.Հ.-ում	30	»
Ղազախական Ս.Ս.Հ.-ում	50	»
Կիրգիզական Ս.Ս.Հ.-ում	20	»
և Հայկական Ս.Ս.Հ.-ում	20	»

5. Ս.Ս.Հ.Մ. ՖԺԿ. բյուջետային տեսչության պետին և ՍՍՀՄ ՖԺԿ. ուսումնական հիմնականի վարչության պետին՝

ա) կազմակերպել 1937 թ. Լենինգրադում մշտական գործող 2-ամսյա վերապատրաստման դասընթացներ դաշնակից, ինքնավար հանրապետությունների, յերկրային ու մարդային ֆինանսական բաժինների բյուջետային տեսչությունների պետերի ու վերստուգիչների համար մշտական կոնստիդենտով 50 հոգուց վոչ պակաս:

Այս դասընթացներում 1937 թ. վերապատրաստել ՍՍՀՄ ՖԺԿ. բյուջետային տեսչության 10 վերստուգիչ:

բ) Տարեկան մեկ անգամից վոչ պակաս անցկացնել 10 որյա սեմինարներ դաշնակից հանրապետությունների ՖԺԿ բյուջետային տեսչությունների Պետերի համար և 15-ից 20 անգամ անցկացնել բյուջետային տեսչությունների այնպիսի վերստուգիչների համար, վորոնք իրենց աշխատանքներում տառնձնապես աչքի չեն ընկնում:

Այսպիսի առաջին սեմինարը անցկացնել 1937 թ. 1-ին կիսամյակում: ՍՍՀՄ ՖԺԿ. ուսումնական հիմնականների վարչության պետին ապահովել հիշյալ միջոցառումների կիրառումը 1937 թ. կադրերի համար հատկացված վարկերի հաշվին ներկայացնելով ինձ, ՍՍՀՄ ՖԺԿ. բյուջետային տեսչության պետի հետ միասին 2 ամսվա ընթացքում, ի հաստատություն ծրագրերի և համառոտ կոնսպեկտների նախագիծը, վորոնք անհրաժեշտ են դասընթացները ու սեմինարիաները անցկացնելու համար:

6. Ռ.Ս.Ֆ.Ս.Հ., Ուկրաինական Ս.Ս.Հ., Ղազախական Ս.Ս.Հ. ՖԺԿ-ին ամեն տարի անցկացնել նույնանման սեմինարներ ինքնավար Ս. Ս. Հ. ՖԺԿ. ու յերկրային (մարզ) ֆինբաժինների բյուջետային տեսչությունների պետերի համար այն վարկերի հաշվին, վորոնք հատկացված են այդ ֆինբաժիններին կադրերի միջոցառումների պահպանման համար:

Բ. ՌԵՎԻԶԻՏՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՄԱՐ

7. Համարել դատապարտելի և որննքով սահմանված կարգի կոպիտ խախտում այն դեպքերը, յերբ ղեկավարող ունվիզիաները ըստ սկզբնական փաստաթղթերի փոխարինվում են զանազան տեսակի հետադուռումներով, կամ «ղեկավարող» ստուգումներով ըստ հաշվետվությունների, առանց ստուգելու սկզբնական փաստաթղթերը:

Սահմանել, վոր ստուգումների ամենամասնական մեթոդը հանդիսանում է հաժադարած ղեկավարող ստուգումը, վորպիսին իրականացվում է հաշվապահական հաշվառման տվյալները համեմատելով իսկական սկզբնական փաստաթղթերի հետ, այն բոլոր ժամանակվա համար, վոր անցել և նախորդ ստուգման

արից, կամ այն ժամանակվա համար, վորը ցույց եւ արվում ստուգման հանձնարարութեան մեջ: Ֆինանսական գործարքները ստուգումը ըստ սկզբնական լուրը փաստաթղթերի անհրաժեշտ դեպքում լրացվում եւ նրանով, վոր տեղում կատարված գործարքները ճշտութեամբ յենթարկվում եւ ստուգման, համեմատելով ստուգման յենթարկվող հիմնարկութեան փաստաթղթերը արա հետ կապված հիմնարկութեանները փաստաթղթերի հետ եւ ստուգելով ապրանքա-նյութական կամ այլ արժեքների առկայութեանը:

Հանրապետութեաններում, մարդային ու յերկրային ֆինանսական մարմինների ղեկավարները, ժողկոմատները, հիմնարկութեանները եւ ձեռնարկութեանների ստուգումների ժամանակ, վորտեղ վոր հափազանց մեծ քանակութեամբ կան սկզբնական փաստաթղթեր եւ հնարավոր չի կատարել համատարած ստուգում ըստ փաստաթղթերի, կարող են թույլատրել կատարելու համատարած ստուգում ըստ փաստաթղթերի առանձին ծախսերի տեսակների նկատմամբ, կամ առանձին ժամանակամիջոցի համար (ամիսների, յեռամսյակների):

8. Համարել վերստուգելի կոչման անվայել յերբ ստուգման արձանագրութեանները ներկայացվում են առանց ցույց տալու, անկախ դեմքերի, այն մեղավոր անձանց ազգանունը, վորոնք թույլ են տվել ֆինանսական կանոնների ու ֆինանսական կարգապահութեան խախտումներ, վորպիսին համարվում եւ այդ վերստուգելի կոչմից փթած լիբերալիզմ ռեվիզիոն աշխատանքի բյուրոկրատական ալյանդակութեան:

Յուրաքանչյուր վերստուգելի, յուրաքանչյուր ստուգման ընթացքում անպայման պետք եւ ստուգյց կերպով պարզի թե հատկապես ով պաշտոնատար անձերից անմիջականորեն մեղավոր եւ հայտնաբերված ֆին. բյուջետային կարգապահութեան խախտումների մեջ եւ ստուգման արձանագրութեանների մեջ հիշատակել նրանց ազգանունը:

Առանց դրան, ստուգման արձանագրութեանները վոչ մի արժեք չունեն եւ ֆինանսական մարմինների ղեկավարների կողմից այդպիսիները չպետք եւ ընդունվին:

9. Սահմանել վոր բարձրագույն ֆինանսական մարմին կողմից առանձին տեղական բյուջեների ստուգման ընթացքում վորպես միւսումնադրող պարտադիր եւ ստուգման հետեյալ ծավալը՝

Գործկոմի նախահաշվի կատարման ստուգումը, նրա — 45 հեմական բաժինների (ֆինանսական, հողային, կոմմունալ, վորեւ մեկ արդյունաբերական բաժնի, առողջապահութեան, կամ լուսավորութեան 2—3 ստորին բյուջեների (շրջանային եւ գյուղական) եւ մի քանի հիմնարկների նախահաշիվների (գլխորդ հիվանդանոցի, մանկատան եւ մանկապարտեզի):

10. Համարել սխալ, հնացած, այլա գործի շահերին չհամապատասխանող հանրապետական եւ տեղական բյուջեների այնպիսի ստուգումների կարգը, յերբ ստուգման յենթարկվում են միայն վարչա-կառավարչական ծախսերը եւ մնում են առանց ստուգման առողջապահական եւ լուսավորութեան ուղեբացիոն ծախսերը (սնունդը, դեղորայքը, վառելիքը եւ այլն) նույնպես, վորպես կանոն մնում են առանց ստուգման արմատորեն բյուջեի հետ կապված եւ մեծ նշանակութեան ունեցող կոմմունալ տնտեսութեան ֆինանսները, տեղական արդյունաբերութեան եւ այլն:

Սահմանել, վոր ամբողջ ռեվիզիոն աշխատանքի հերթական խնդիրը բյուջեներով հանդիսանում եւ վոչ թե միայն վարչա-կառավարչական ծախսերի ստուգումը, այլ եւ առողջապահութեան եւ լուսավորութեան ուղեբացիոն ծախսերի ու նամանավանդ այն ծախսերի, վորոնք կապված են կոմմունալ տնտեսութեան եւ տեղական արդյունաբերութեան հետ եւ վորոնք ֆինանսական կարգապահութեան տեսակետից գտնվում են ամենից անհաջող դրութեան մեջ:

Առանձին տնտեսական մարմինների եւ ձեռնարկութեանների ստուգման պարտականութեանները դնել ֆինմարմինների հյուղային խմբակների վրա:

11. Սահմանել բոլոր ֆինանսական մարմինների համար վերստուգման աշխատանքների տարեկան եւ յեռամսյակային պլանների կազմել պարտադիր կարգով:

Այդ պլանները պետք եւ հաստատված լինեն ֆինմարմինների ղեկավարների կողմից՝

ա) տարեկան պլանը նախորդ տարվա դեկտեմբեր ամսի 1-ից վոչ ուշ:

բ) Յեռամսյակային պլանը յեռամսյակի սկզբին 10 որ առաջ:

ԽՍՀՄ ՖԺԿ. կենտրոնացված հանձնարարութեանները

պլանը պետք է հաստատվի և ուղարկվի տեղերին յուրաքանչյուր յեռամսյակի սկզբին 20 ուր առաջ, կցելով նրան անհրաժեշտ ծրագրերը:

Այն ֆինմարմինների ղեկավարները, վորոնք մինչ հիմա չեն հաստատել վերստուգման աշխատանքների ծրագրերը, 1937 թ. համար պարտավոր են հաստատել այդպիսին մայիսի 1-ից վոչ ուշ:

12. Առաջարկել իՍՀՄ ՖժԿ. ֆին բյուջետային տեսչության պետին և ֆինանսական մարմինների ղեկավարներին տարեկան և յեռամսյա բյուջետային ռեվիզիաների պլանը կազմելու ժամանակ անպայման ի նկատի ունենալ Միութենական կենտրոնի միջին նստաշրջանի 16/1—36 թ. վորոշումը այն մասին, վոր տարեկան մեկ անգամից վոչ պակաս պետք է ստուգվի յուրաքանչյուր բյուջեն և գործկոմի բաժինները:

13. Ռեվիզիաների պլանի կատարման խնդիրը համարել լուծված միայն այն դեպքերում, յերբ ստուգումների հետևանքներով ձեռնարկված են բոլոր անհրաժեշտ միջոցները վերացնելու հայտնաբերված խախտումները, յերբ ֆին. բյուջետային կարգապահությունը խախտող մեղավոր անձինք և պետական միջոցները հափշտակողները յենթարկված են պատասխանատվության ու յերբ խոշորագույն ու ցուցադրական ռեվիզիաների արդյունքները գեկուցված են ղեկավար մարմիններին, իսկ ռեվիզիոն նյութերից հանված են քաղաքական հետևություններ, լուսաբանելով մամուլում խոշորագույն ցուցադրական դեպքերը:

14. Առաջարկել դաշնակից և ինքնավար հանրապետությունների ՖժԿ ու մարզային և յերկրային ֆինանսական բաժինների վարիչներին գումարել ռեվիզիոն խորհրդակցություններ տարեկան 2 անգամից վոչ պակաս, մասնակցությունը շրջանային, քաղաքային և մարզային ֆինմարմինների փորձված վերստուգիչների, վորպեսզի այդ խորհրդակցությունները ոգտագործվեն ռեվիզիոն աշխատանքների փորձը ամփոփելու համար ու մշակվեն ռեվիզիոն եֆֆեկտիվ մեթոդները:

Նույն նպատակով առաջարկել իՍՀՄ ՖժԿ. բյուջետային վարչության պետին և բյուջետային տեսչության պետին գումարել տարեկան 2 անգամ ռեվիզիոն խորհրդակցություններ մասնակցությունը 25—40 վերստուգիչների գնադան հանրապետություններից ու մարզերից:

15. Առաջարկել իՍՀՄ ՖժԿ. բյուջետային տեսչության պետին մշակել և ներկայացնել ինձ ի հաստատություն հետևյալ հրահանգներն ու ծրագրերը, մասնակից դարձնելով տեղական աշխատակիցներին և գերագանցիկ վերստուգիչներին՝

ա) հրահանգներ ծրագրեր գյուղ-բյուջայի ռեվիզյան կատարելու կարգի մասին 1937 թ. մայիսի 1-ից վոչ ուշ, քաղ. (շրջ.) բյուջայի 1937 թ. հուլիսի 1-ից վոչ ուշ, գործադիր կոմիտեների բաժինների ֆինանսական տնտեսության 1937 թ. սեպտեմբերի 1-ից վոչ ուշ, տիպային հիմնարկությունների (հիվանդանոց, դպրոց, մանկամսուր և այլն) 1937 թ. ոգոստոս ամսի 1-ից վոչ ուշ.

բ) հրահանգ վերստուգիչներին կողմից ստուգված փաստաթղթերի վրա նշումներ կատարելու կարգի մասին և վճարումներ կատարված փաստաթղթերի մարման կարգի մասին 1937 թ. մայիսի 1-ից վոչ ուշ:

16. Հաշվի առնելով այն, վոր հսկողության բացակայություն պատճառով թե ինչպես են կիրառվում կյանքում ստուգման հետևանքով արված առաջադրանքները, կորցնում են իրենց արժեքը ստուգման արդյունքները և ֆլասում գործին ֆին. բյուջետային կարգապահությունը ամրացնելու ու խախտումները վերացնելու տեսակետից առաջարկել իՍՀՄ ՖժԿ. բյուջետային տեսչության պետին, դաշնակից հանրապետությունների ու ինքնավար հանրապետությունների ֆինանսների ժողովուրդներին նաև յերկրային ու մարզային ֆինանսական բաժինների վարիչներին ազահովել այնպիսի կարգ, վորպեսզի ստուգումը վերջանալուց հետո 3 ամսվա ընթացքում ֆին. մարմինների կողմից ստուգվեն տեղերում ռեվիզիաների հետևանքով իրենց կողմից արված առաջադրանքների կատարումը:

17. Վերստուգիչներին աշխատանքների վրա հսկողություն սահմանելու համար և նրանց պատասխանատվությունը ուժեղացնելու համար, առաջարկել դաշնակից հանրապետությունների ու ինքնավար հանրապետությունների ֆինանսների ժողովրդական կոմիտեներին նաև մարզային ու յերկրային ֆինանսական բաժինների վարիչներին անպայմանորեն բյուջետային տեսչությունների աշխատանքների պրակտիկայի մեջ մտցնել այնպիսի կարգ, վորպեսզի գլխավոր ու ավագ վերստուգիչները ընդունեն վերստուգիչներից նրանց կողմից կատարված ռեվիզիաների

արձանագրությունները այդպիսիները ստուգման յենթարկելու համար (թե վորքան համապատասխանում են կազմված արձանագրությունները ղեկավարների պահանջներին և ծրագրերին ու վորքան հիմնավորված են բոլոր արձանագրված խախտումները և այլն):

Սահմանել վոր շրջֆինբաժինների վերստուգիչների կողմից կատարված ղեկավարների արձանագրությունների նման ընդունումը ապահովում և անձամբ շրջֆինբաժնի վարիչը, կատարված ղեկավարի յուրաքանչյուր արձանագրությունը ընդունելու ժամանակ գլխավոր, կամ ավագ վերստուգիչ կողմից արդյունքների մասին կազմել գրավոր յեզրակացություններ և քննության առնել ֆինանսական մարմինների աշխատակիցների արտադրական խորհրդակցություններում: Ռեվիզիան անբավարար կատարված լինելու դեպքում հանձնարարել գլխավոր, կամ ավագ վերստուգիչին կատարել կրկնակի ղեկավար:

18. Առաջարկել պետական ֆինանսական հրատարակչության ԽՍՀՄ-ի ՖժԿ բյուջետային տեսչության պետի հետ համաձայնեցնելով ապահովել ընթացիկ տարում ղեկավարին աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ ձեռնարկների հրատարակումը և մասնավորապես հիմնական որենսդրական ակտերի ժողովածուն և ԽՍՀՄ-ի ՖժԿ, կարգադրությունները, վորոնք ունեն խոշոր նշանակություն շրջանային, քաղաքային և մարզային վերստուգիչների համար ղեկավարներին ղեկավարների ընթացքում:

Գ. ՖԻՆ. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ ՂԱՅԲԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ.

19. Առաջարկել ԽՍՀՄ-ի ՖժԿ, բյուջետային տեսչության պետին և ֆինանսական որդանների բոլոր ղեկավարներին խիստ կերպով անցկացնել հետևյալ պայքարի միջոցառումները ֆինանսական որենսդրության խախտումների դեմ՝

ա) բյուջետային կազմակերպություններում ապորինի ընթացիկ հաշիվներ հայտնաբերելու դեպքում այդ հաշիվները փակել ու այդ հաշիվներում գտնվող միջոցները մուտք անել համապատասխան բյուջեների ոգտին:

բ) Ստուգման պրոցեսում յեթե կհայտնաբերվեն անտե-

սակա մարմիններում կամ հիմնարկություններում աշխատի միջոցներ, վորոնք ստացված են գոյություն ունեցող որենսդրության խախտման միջոցով այդ միջոցները պետք և առանձնացնել և հանձնել համապատասխան բյուջեի ոգտին, յեթե այդպիսիները յենթակտ չեն վերադարձման ըստ պատկանելույն:

գ) Յեթե տեղական և հանրապետական բյուջեները մուտք են արված աշխատի միջոցներ, վորոնք պատկանում են վերագաս բյուջեներին, համապատասխան գումարները պետք և արտադրվեն վերադաս բյուջեների ոգտին հանրապետությունների, գործադիր կոմիտեների և խորհուրդների բյուջետային հաշիվներին, վորոնք թույլ են տվել այդ խախտումները:

դ) յեթե տնտեսական մարմիններում կամ հիմնարկություններում կհայտնաբերվեն աշխատի հաշիվներ, վորոնք ձևակերպված չեն սահմանված որենսդրական կարգով, այդ հաշիվները փակել մինչև վոր կձևակերպվեն որենսդրով:

ե) յեթե կհայտնաբերվեն բյուջետային տարվա սկզբին բյուջետային միջոցների, կամ նյութերի ու պաշարների թագցրված միջոցներ, վորոնք հաշվի չեն առնված բյուջեն կազմելու ժամանակ, կամ գույքի ռեալիզացիայից գոյացած գումարները չեն հանձնված համապատասխան բյուջեների ոգտին, կամ անցած տարիների դերձորական պարտքերից ու առհաշիվ գույքած տարիներից մուծումների մուտքը հաշվի չեն առնված բյուջեն կազմելու ժամանակ, կամ թե հայտնաբերվում են ֆիկտիվ կրեկազմելու ժամանակ, կամ թե հայտնաբերվում են ֆիկտիվ կրեկազմելու ժամանակ, կամ թե հայտնաբերվում են ֆիկտիվ կրեկազմելու ժամանակ այս դեպքերում համապատասխան գումարները յենթակա են հանձնման բյուջեն ըստ պատկանելույն:

յե) յեթե կհայտնաբերվեն հաստիքային կարգապահության խախտումներ (սահմանված հաստիքների, կոնտինգենտների ու աշխատավարձի ֆոնդերի ավելացումներ, աշխատավարձի դրույքների ինքնակամ բարձրացում) փակել վարկերը, անհապաղ հայտնելով այդ մասին վերագաս տնտեսական մարմիններին ու հիմնարկություններին:

զ) Բոլոր այն դեպքերում, յերբ կհայտնաբերվեն խախտումներ, վորոնք յենթակա են քրեական հետապնդման, համապատասխան վերստուգման նյութերը 3 որվա ընթացքում հղել դատախազական մարմիններին մեղավոր անձանց դատական պատասխանատվության յենթարկելու համար:

20. Իստապարտել խորը կերպով արմատացած լիբերալ վերաբերմունքը դեպի խախտումները, վորոնք թագցված են բյուջեյի ընդհանուր թվերի կատարման և գերակատարման մեջ։ Առաջարկել բոլոր ֆինանսական մարմիններին ռեվիզիաների ընթացքում խիստ կերպով ստուգել բյուջեյի կատարումը ըստ բյուջետային ստորաբաժանումների բոլոր հոգվածներով առանձին, առանձին։

21. Առաջարկել ԽՍՀՄ-ի ՖԺԿ. բյուջետային տեսչության պետին և ֆին. մարմինների ղեկավարներին սահմանել այնպիսի խիստ կարգ, վորպեսզի բոլոր ղեկավարները առանց բացառության, յերբ հայտնաբերվում են ֆին. բյուջետային կարգապահության խախտումներ ստուգեն թե այդ հիմնարկների և ձեռնարկությունների (ավագ) հաշվապահները ինչպես են կատարել 1935 թ. 21 հունիսի որենքով նրանց վրա դրված պարտականությունները սոցիալիստական սեփականությունը պաշտպանելու համար և բոլոր այն ղեկավարները յերբ հաշվապահների կողմից չի կատարված այդ որենքի պահանջները, յենթարկել նրանց պատասխանատվության հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների ղեկավարների հետ միասին։

22. Հաշվի առնելով այն հանգամանքը, վոր գոյություն ունեն անթույլատրելի այնպիսի ղեկավար, յերբ ֆինանսական մարմինները անհրաժեշտ ոգնություն և պաշտպանություն չեն ցույց տալիս հիմնարկությունների ու ձեռնարկությունների այն հաշվապահներին, վորոնք համառորեն պաշտպանում են խորհրդային որենքները և ֆինանսական կարգապահությունը, ԽՍՀՄ-ի ՖԺԿ. բյուջետային վարչության պետի ու ֆինմարմինների ղեկավարների պարտականությունների մեջ մտցնել այդ հաշվապահներին լիովին ոգնություն ու պաշտպանություն ցույց տալու գործը, ի նկատի ունենալով այն, վոր առանց դրան հնարավոր չե կերպով կյանքի մեջ հաշվապահների իրավունքների ու պարտականությունների որենքը։

23. Արձանագրել, վոր ֆինանսական կարգապահության խախտումների բազմիցս փաստերը և պետական միջոցների ղեկավարությունները, վորոնք հայտնաբերվում են ռեվիզիաների ընթացքում, կարող էին իր ժամանակին հայտնաբերվել, յեթե այն աշխատակիցները, վորոնք զբաղված են ֆինանսական օրգաններում ու բանկերում ընթացիկ ֆինանսավորումներով և

ընթացիկ հաշվետվությունների հսկողությունը, բարեխղճորեն կատարելիս իրենց վրա դրված պարտականությունները։

Առաջարկել ԽՍՀՄ-ի ՖԺԿ. բյուջետային տեսչության պետին և բոլոր ֆինանսական մարմինների ղեկավարներին բոլոր ղեկավարներում առանց բացառության, յերբ ընթացիկ հաշվետվությունների տվյալներով և ընթացիկ ֆինանսավորման ընթացքում հնարավոր եր պարզելու ռեվիզիաների ընթացքում հայտնաբերված ֆինանսական որենքների խախտումները ու պետական միջոցների ղեկավարությունները, յենթարկել պատասխանատվության ղեկավարների հետ միասին ֆինանսական մարմինների ու բանկերի նաև այն անձանց, վորոնք պատասխանատու են ընթացիկ ֆինանսավորման համար։

Դ. ՆԵՐԲ. ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՆՏՐՈԼԻ ԳԾՈՎ.

24. Համարել սխալ մի շարք ֆինանսական մարմինների մի կողմ քաշվելու այն դիրքը, յերբ նրանք չունեն հսկողությունները, գերատեսչական ֆինանսական կոնտրոլի աշխատանքները կազմակերպելու վրա։

Առաջարկել դաշնակից հանրապետությունների ֆինանսական ժողովուրդներին, չփոխարինելով գերատեսչությունների վերստուգման աշխատանքները, վորոնց վրա ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի կողմից դրված ե իրենց յենթակա հիմնարկների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների տարեկան ռեվիզիաների կատարման պատասխանատվությունը, սահմանել սխտեմատիկ հսկողություն 1936 թ. 15 ապրիլի ԽՍՀՄ-ի ԺԿԽ-ի վորոշման կատարման վրա ներք. գերատեսչական ֆին. կոնտրոլի մասին։ Մասնավորապես ֆինմարմինների այդ հսկողությունը պետք ե իրագործվի հետևյալ կերպ՝

ա) ներք. գերատեսչական ֆինանսական կոնտրոլի վերստուգումները պլանների կատարման ստուգումը։

բ) բյուջետային տեսչությունների ուժերով ստուգել բյուջետային հիմնարկների ռեվիզիաների առանձին արձանագրությունները, վորոնք կատարված են ներք. գերատեսչական ֆին. կոնտրոլի միջոցով։

գ) ֆինմարմինների ճյուղային բաժինների ուժերով ստուգել

տնտեսական որգանների կողմից կատարված ռեվիզիաների առանձին արձանագրությունները, վորոնք կատարված են ներք. գերատեսչական ֆինանսական կոնտրոլի միջոցով:

դ) Ներք. գերատեսչական ֆին. կոնտրոլի կողմից ստուգման յենթարկված սուսնձին հիմնարկների ու ձեռնարկությունների նկատմամբ կատարել կրկնակի ստուգում մասնակից դարձնելով այդ աշխատանքներին ֆինմարմինների և բանկերի պաշտոնատար անձանց, վորոնք գրադված են ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի ֆինանսավորումով:

25. ԽՍՀՄ ՖժԿ. բյուջետային տեսչության պետի և ֆինանսական մարմինների ղեկավարների վրա դնել պարտականություն բողոքարկել և ձգտել վերացնելու գերատեսչությունների կողմից հանված սխալ վորոշումները, վորոնք կհայտնաբերվեն կետ 24-ում ցույց տրված ստուգումներով, յերբ գերատեսչությունները սվաղում են ստուգումների արդյունքները ու չեն ապահովում հայտնաբերված ֆին. բյուջետային կարգապահության խախտումները վերացնելու, նաև չեն պատժում այն անձանց, վորոնք մեղավոր են այդ խախտումները կատարելու մեջ:

Պետական և տեղական բյուջեների կազմելու ու կատարելու աշխատանքները շատ դեպքերում գտնվում են վոչ թե լավ, այլ ավելի վատ դրության մեջ, քան վերստուգման աշխատանքները:

Բյուջետային աշխատանքների հիմնական բացերը կայանում են հետևյալում՝

ա) բյուջեն կազմելու ժամանակ չեն կարող ոգտագործել ընթացիկ տարվա բյուջեի կատարման վերաբերյալ յեղած նյութերը և չեն կարող տալ ճիշտ գնահատական սպասվելիք յեկամուսներին ու յենթադրվելիք ծախսերի կատարմանը:

Սա արդյունք է նրան, վոր ֆինանսական մարմինների ղեկավարներից շատերը՝

1) չեն տանում աշխատանք սխտեմաաիկաբար ուսումնասիրելու բյուջեի կատարման ընթացքը, չեն ստուգում ամսից ամիս, յեռամսյակից յեռամսյակ հաշվետվության տվյալները մուտք յեղած յեկամտային աղբյուրների և փաստացի կատարված ծախսերի նկատմամբ:

2) Խուսափում են այդ դժվար, բայց անհրաժեշտ աշխատանքից, տանելով իրենց համար ավելի հեշտ, բայց որենքին

հակասող և պետության համար վնասարար պրակտիկա այն ե՝ ֆինանսավորում վոչ թե փաստացի կատարման պլանի չափերով, այլ պլանի ներքո:

3) Բյուջեները կազմում են միայն ընթացիկ տարվա պլանային նշանակումների հիման վրա, հաշվի չառնելով պլանի կատարման փաստացի ընթացքը և նրա ճիշտ գնահատականը:

բ) Լայն կերպով արմատացած է այնպիսի պրակտիկա, վոր ներկայացվում են դալիք տարվա համար չհիմնավորված և մակերեսորեն կազմված բյուջետային հայտեր, վորխանակ ստույգ կերպով մշակել բյուջետային նախագծերը ու հիմնավորված հաշվառքներ ներկայացնելու, անհրաժեշտ գումարներ ստանալու համար, վորխանակ ընթացիկ տարվա բյուջեի սպասվելիք կատարման ճիշտ գնահատականի հիման վրա պահանջել անհրաժեշտ գումարներ գալիք տարվա համար:

գ) Բյուջեները կազմելու ու կատարելու աշխատանքների մեջ յեղած ձեղքվածքը մի կողմից և վերստուգման աշխատանքների մյուս կողմից, վերստուգման աշխատանքների տվյալները չեն ոգտագործվում բյուջետային հաշվառքները ստուգելու համար, չեն հասկանում այն, վոր վերստուգման աշխատանքը հանդիսանում է ամենալավ միջոցը բյուջետային պլանավորման պատրաստման համար և սրա հետևանքը այն է, վոր բյուջեները կազմելու մեթոդը լինում է գրասենյակային, բյուրոկրատիկ, վորը տանում է անխուսափելիորեն պետական միջոցների կամ շուսյման, կամ առանձին տնտմարմինների, հիմնարկությունների, ձեռնարկությունների ու կազմակերպությունների փաստացի կարիքների վոչ հիմնավորված և վոչ ճիշտ ձմման:

դ) Արմատացած է այնպիսի պրակտիկա, վոր բյուջետային հաշվառքները քննության են առնվում չափազանց մակյերեսորեն, ընդ վորում ֆինանսական մարմինների ղեկավարները վորպես կանոն քննության են առնում բյուջետային նախագծերը սխալ մեթոդով այն և տարաձայնությունների շուրջը վորխանակ ստուգելու հաշվառքները և ըստ եյության հիմնավորումները, այսպիսով հաշվառքների եյությունը հանձնարարում են յերկրորդական աշխատակիցներին:

յ) ԽՍՀՄ-ի ՖժԿ. և դաշնակից հանրապետությունների ՖժԿ. հաշվային նորմատիվներ սահմանելու գործը գտնվում է

չափազանց անսխտեմ և վոչ կարգավորված գրության մեջ, (որինակ դպրոցների, հիվանդանոցների ծախսերի նորմաները) այդ նորմատիվները մշակվում են գրասենյակային բյուրոկրատիկ մեթոդով, պլանային նորմաները չեն համեմատվում փաստացի ծախսերի հետ, սրա հետևանքը այն է, վոր չեն կարող ճշտորեն ոգտագործել բյուջեների պլանավորման այս եյական գործիքը, չեն կարող տեսնել միջին նորմաների հետևից կենդանի կազմակերպությունները:

դ) Նախահաշվային նյութերը և հաշվառքները անթույլատրելի անմաքուր գրության մեջ են գտնվում, գրություն ունի անտանելի ախպիսի պրակտիկա, յերբ ֆինամարմինները ընդունում են քննության գերատեսչությունների ու կազմակերպությունների կողմից կազմված հայտերը թղթի կտորների վրա առանց համապատասխան ձևակերպման ու ստորագրությունների: Սրա հետևանքով մի քանի ֆինանսների ժողովուրդներ 1937 թ. համար ժողկոմխորհների կողմից ընդունված և հավանություն ստացված բյուջեներին, չկարողացան ներկայացնել ստորագրված նախահաշիվներ ու հաշվառքներ, հիմնավորելու այդ բյուջեները: (Որինակ Թաթալիայի ԽՍՀ ֆինժողկոմատը Բելոռուսիայի ԽՍՀ ֆինժողկոմատը և մյուսները):

թ) ԽՍՀՄ-ի ՖԺԿոմատի կողմից բյուջետային աշխատանքների կազմակերպման խնդիրների թույլ ղեկավարությունը և մի շարք կարևոր ցուցմունքների ուղացումը (որինակ բյուջետային կլասսիֆիկացիան 1937 թ. համար):

Նպատակ դնելով վերացնելու այս բացերը, բյուջետային պլանավորման գործը կարգավորելու և բյուջետային տեսուչների աշխատանքները բարելավելու համար:

Հրամայում եմ

1. Արգելել բյուջեների կազմելը միայն ընթացիկ տարվա պլանի հիման վրա, հաշվի չառնելով նրա կատարման ընթացքը և պարտավորեցնել դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ՖԺԿ-ին նաև ֆինամարմինների ղեկավարներին մինչև շրջանները ներառյալ պետական բյուջեն և 1938 թ. համար տեղական բյուջեների ստուգիչ թվերը կազմելու մոմենտին ապահովել ընթացիկ տարվա բյուջեի սպասվելիք կատարման ճշտական գնահատականը, հսկելով բյուջեի կատարման ընթացքը ամսից ամիս, յեռամսյակից յեռամսյակ:

Արգելել ԽՍՀՄ-ի ՖԺԿ. բյուջետային վարչությանը, դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ֆինժողկոմատներին նաև մարդայի ֆինբաժիններին ընդունել 1938 թ. համար բյուջետային նախագծերը ի քննարկություն, վորոնք կազմված են միայն ընթացիկ տարվա պլանի հիման վրա առանց ընթացիկ տարվա բյուջեի սպասվելիք կատարման գնահատականի:

2. Արգելել վորպես գործի — շահերին հակասող բյուջետային նախագծերի քննարկման պրակտիկան ըստ «տարածայնությունների» մեթոդի, պարտավորեցնելով ֆինանսական մարմինների ղեկավարներին ստուգել ըստ եյության բյուջետային տեսուչների կողմից կազմված հաշվառքների ճշտությունը և հիմնավորումը, վորպեսզի բյուջեների և ստուգիչ թվերի նախագծերին կցված լինեն հիմնավորված հաշվառքները և ստորագրված բյուջետային տեսուչների կողմից, վորոնք այդ հաշվառքներ կատարել են նաև այն ֆինամարմինների ղեկավարների ստորագրություններով, վորոնք ստուգել են այդ հաշվառքների ճշտությունը և հիմնավորումը:

Առաջարկել ԽՍՀՄ ՖԺԿ. բյուջետային վարչության պետին դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ՖԺԿ-ին նաև մարդային ու յերկրային ֆինանսական բաժինների պետերին, ստուգիչ թվերը և 1938 թ. համար բյուջեները կազմելու պրոցեսում կազմակերպել ջոկովի ստուգում թե ինչպես և կատարվում սույն հրամանի այս կետը:

3. Առաջարկել ԽՍՀՄ ՖԺԿ. բյուջետային վարչության պետին մինչ 1937 թ. սեպտեմբերի 1-ը ստուգել 1937 թ. բյուջետային ծախսերի համար ընդունված նորմատիվների ճշտությունը (տնտմարմինների շրջանառու միջոցների վերաբերյալ, դպրոցների, հիվանդանոցների և այլն), մշակել առաջադրանքներ այդ նորմատիվները փոփոխելու համար 1938 թ. բյուջետային հաշվառքների նկատմամբ ու ներկայացնել ինձ ի հաստատություն:

Առաջարկել դաշնակից հանրապետությունների ֆինժողկոմատներին 1937 թ. հուլիսի 1-ից վոչ ուշ ներկայացնել ԽՍՀՄ ՖԺԿ. բյուջետային վարչության պետին 1938 թ. բյուջեների համար նորմատիվների նախագիծը, մանրամասն հաշվառքներով և հիմնավորումներով:

Պարտավորեցնել ԽՍՀՄ ՖԺԿ. բյուջետային վարչությանը

1937 թ. մայիսի 1-ից վոչ ուշ հայտնել դաշնակից հանրապետությունների ֆինոգլոմատներին այդ նորմատիվներից ցուցակը:

4. Սահմանել, վոր յուրաքանչյուր բյուջեյի և տեղական բյուջեների սուուգիչ թվերի նախագծին, վորը ներկայացվում է վերադաս ֆինանսական մարմինն ի քննարկումն, պետք և կցված լինեն հետևյալ ցուցակները, վորոնք պետք է ստորագրված լինեն ֆինմարմնի ղեկավարի կողմից և պարունակեն իրենց մեջ՝

ա) ծախսերի առանձին տեսակների նորմատիվները, վորոնք ընդունված են ընթացիկ տարվա տեղական բյուջեների սուուգիչ թվերը սահմանելու ընթացքում ստորին ողակների համար:

բ) Այդ նորմատիվների ուղղումները, վորոնք ընդունված են ընթացիկ տարվա բյուջեների վերջնական հաստատման ժամանակ:

գ) Ընթացիկ տարվա անցած ժամանակվա փաստացի ծախսերը և սպասվելիք ծախսերի տարվա վերջին ֆինմարմնի գնահատությունը:

դ) Այն նորմատիվները, վորոնք նախագծվում են գալիք տարվա համար հաշվառքների ու հիմնավորումների հետ միասին:

Արգելիել ֆինանսական մարմինների ղեկավարներին ընդունել այն բյուջեները ու սուուգիչ թվեր ի քննարկումն, վորոնք ներկայացվում են այս կարգի խախտումներով:

5. Ի նկատի ունենալով այն, վոր բյուջետային աշխատանքների պրակտիկայում տեղի ունի վոչ քննադատական վերաբերմունք բյուջեները կազմելու ընթացքում, միջին նորմատիվները ընդունվում են անհիմն, վորը շատ դեպքերում պատճառ է հանդիսանում կամ ավելորդ ֆինանսավորման կամ առանձին հիմնարկությունների ու ձեռնարկությունների որինական շահերի կողմից խախտումների, ուստի առաջարկել ֆինմարմիններին ղեկավարներին բյուջեները կազմելու ընթացքում ապահովել առանձին հիմնարկությունների ու կազմակերպությունների անհատական նախահաշիվների քննարկումը ըստ ելույթյան:

6. Շատ դեպքերում ֆինանսական մարմինները ներկայացնում են գործկոմիտեի պահանջներին բյուջեների այնպիսի նախագծեր, վորոնք կազմված են լինում կրճատված ամփոփ ձևով, ուստի առաջարկել դաշնակից հանրապետությունների

ֆինոգլոմատներին ապահովել, վորպեսզի տեղական ֆինանսական մարմինների կողմից ներկայացվեն գործկոմիտեի պահանջներին ի հաստատություն բյուջեների այնպիսի նախագծեր, վորոնք կազմված են միայն ըստ լրիվ բյուջետային կլասիֆիկացիայի:

7. Առաջարկել դաշնակից հանրապետությունների ֆինոգլոմատներին ապահովել, վորպեսզի հաստատված բյուջեներին (պետական և բոլոր տեղական բյուջեներին) կցված լինեն այն հիմնարկների ցուցակները, վորոնք ֆինանսավորվում են տվյալ բյուջեով, մասնաշեղջով այն գումարները, վորոնք հաստատված են յուրաքանչյուր հիմնարկության նախահաշիվով ու նրա արտադրական պլանի հիմնական ցուցանիշները (դասարանների թիվը, սովորողների, մահակալների և այլն):

1937 թ. հաստատված բյուջեների համար այդ հավելվածները պետք է կազմված լինեն ընթացիկ տարվա հուլիսի 1-ից վոչ ուշ:

8. Առաջարկել դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ֆինոգլոմատներին նաև ֆինանսական մարմինների ղեկավարներին մինչ շրջանները ներառյալ սուուգել թե ինչպես է կենսագործվում նրանց մոտ պրակտիկայում անտմարմիններին, հիմնարկությունների և կազմակերպությունների բյուջետային ֆինանսավորումը ու վերացնել մի շարք տեղերում շարունակվող ապրելիքի ֆինանսավորումը պլանի ներքո, այլ վոչ թե ֆինանսավորվող հիմնարկությունների պլանների փաստացի կատարման չափերով:

Առաջարկել ԽՍՀՄ ՖժԿ. բյուջետայի տեսչության պետին և բոլոր ֆինանսական մարմիններին տեղական բյուջեների ղեկավարների ընթացքում սուուգել արդյոք անցե կացվում ֆինանսավորումը ֆինանսավորվող հիմնարկությունների պլանների կատարման ընթացքի կապակցությամբ թե վոչ:

9. Առաջարկել դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ֆինոգլոմատներին և ֆինանսական մարմիններին բոլոր ղեկավարներին սահմանել պարտադիր կարգ ընթացիկ հաշվետվությունը սուուգելու համար (ամսական և յեռամսյակային) այն հիմնարկությունների, կազմակերպությունների ու ձեռնարկությունների նկատմամբ, վորոնք ֆինանսավորվում են բյուջեյով, անպայման նշելով այդ հաշվետվության վրա այն անձնավորությունը ազգանունը վորը սուուգում է կատարել նաև ցույց տալ սուուգման տարեթիվը:

10. Առաջարկել Խ.Ս.Հ.Մ. ԶԺԿ. բյուջետային վարչության պետին ներկայացնել ինձ ի հաստատություն ա. թ. հուլիսի 15-ից վոչ ուշ և հրապարակել՝

ա) հրահանգ գյուղական բյուջեները կազմելու, քննարկելու ու կատարելու կարգի մասին:

բ) հրահանգ շրջանային բյուջեները կազմելու, քննարկելու ու կատարելու կարգի մասին:

գ) առանձին տեսակների տիպային հիմնարկությունների անհատական նախաձեռնումների և հաշվետվությունների ձևերը:

11. Առաջարկել դաշնակից ու ինքնավար հանրապետությունների ֆինոգիկոմատներին, մարզային և յերկրային ֆինանսական բաժինների վարիչներին անցկացնել առ 1-ն հունվարի 1938 թ. բյուջետային տեսուչների ատեստացիան նրանց քաղաքական և գործնական վորակավորման տեսակետից ի նկատի ունենալով բյուջետային տեսուչների կադրերի ուժեղացման անրաժեշտությունը:

12. հանձնարարել Խ.Ս.Հ.Մ. ԶԺԿ. բյուջետային վարչության պետին ա. թ. հուլիս ամսից վոչ ուշ դեմարել խորհրդակցություն դաշնակից հանրապետությունների բյուջետային վարչության պետերին և խոշոր տեղական ֆինանսական մարմինների բյուջետային բաժինների վարիչներին:

Առաջարկել դաշնակից հանրապետությունների ֆինոգիկոմատներին ս. թ. 3-րդ յեռամսյակում ինքնավար հանրապետություններում, մարզերում և յերկրներում անցկացնել բյուջետ. տեսուչների հրահանգչական խորհրդակցություններ, գործողելով (ավելի խոշոր հանրապետությունները, մարզերն ու յերկրները) դաշնակից հանրապետությունների ղեկավար աշխատակիցներին և ԽՍՀՄ ԶԺԿ. բյուջետային վարչության աշխատակիցներին այդ խորհրդակցություններին մասնակցելու համար:



336
Խ-11



